Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
նոյեմբերի 12-ի N 1660-Լ որոշման

Կ Ա Ր Գ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՆԻ ՏԵՍԱԿԻ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻՑ ՄԹԵՐՎՈՂ ԽԱՂՈՂԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. 2026 թվականի Արենի տեսակի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակներում Վայոց ձորի մարզից մթերվող խաղողի քանակների փաստաթղթավորման և տեղեկատվության տրամադրման կարգի (այսուհետ՝ կարգ) գործողությունը տարածվում է միջոցառման շրջանակներում առնվազն 800 տոննա և ավելի քանակությունը նվազագույնը 210 դրամով Արենի տեսակի խաղողի մթերումներ իրականացնող իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) վրա:

2. Կարգով հաստատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից Վայոց ձորի մարզից գնված Արենի տեսակի խաղողի քանակների փաստաթղթավորման և նախարարությանն ու մարզպետների աշխատակազմերին (այսուհետ՝ լիազոր մարմիններ) ներկայացվող տեղեկատվության ձևը, ներկայացման ժամկետները և լրացման կարգը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Լիազոր մարմիններին տեղեկատվության տրամադրման նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից Վայոց ձորի մարզից մթերվող խաղողի քանակների փաստաթղթավորումն իրականացվում է կարգի ձևին համապատասխան:

4. Տնտեսավարող սուբյեկտների Արենի տեսակի խաղողի գնման ժամանակաշրջանում ամենօրյա պարբերականությամբ լիազոր մարմինների էլեկտրոնային փոստերի

հասցեներին են ներկայացնում իրենց կողմից Վայոց ձորի մարզից գնված Արենի տեսակի խաղողի քանակների վերաբերյալ Էքսել (Excel) ծրագրով լրացված և տնտեսավարող սուբյեկտի կողմից լիազորված անձի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով տեղեկատվությունը՝ կարգի ձևին համապատասխան:

5. Կարգի ձևի տեղեկատվությունը ներկայացվում է խաղողի գնում կատարած յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև հաջորդող օրվա ժամը 18^{00} -ն:

6. Լիազոր մարմիններն ապահովում են կարգի ձևի տեղեկատվությունում ներառված՝ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Կարգի ձևի տեղեկատվությունում ներառվող շահառուի, խաղողի տնկարկի տեղակայման վայրի և գնված խաղողի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն շահառուի և տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերում ներառված տվյալներին:

8. Կարգի ձևի տեղեկատվությունը լրացվում և ներկայացվում է հայերենով՝ Սիլֆաեն (Sylfaen) տառատեսակով:

9. Թվային ցուցանիշները լրացվում են թվի տասներորդական մասի ճշտությամբ:

10. Խաղողի տնկարկի տեղակայման վայրի, շահառուի և խաղողի վերաբերյալ տվյալները լրացվում են ճշգրիտ և ամբողջական, որ ապահովվի դրանց նույնականացումը:

Ձև

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

_____

(Տնտեսավարող սուբյեկտի անվանումը և մթերման կետը)

կողմից Վայոց ձորի մարզից մթերված (գնված) Արենի տեսակի խաղողի քանակների մասին

Ամսաթիվը (օր, ամիս,տարի, XX.XX.2026)	Շահառուի անվանումը կամ անունը, ազգանունը	Շահառուի ՀՎՀՀ-ն կամ անձնագրի սերիան կամ ն/ք համարը	Շահառուի հեռախոսահամարը XXXXXXXX)	Խաղողի գնման պայմանագրի համարը	Խաղողի տնկարկի տեղակայման համայնքը	Խաղողի տնկարկի տեղակայման բնակավայրը	Խաղողի տնկարկի չափը՝ ըստ պայմանագրի (հա)	Հանձնած խաղողի քանակը (կգ)	Մթերման (գնման) 1 կգ-ի գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ստորագրող

……. …….

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

…….

(ստորագրությունը)

….. …….. 2026 թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

16.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ